


Մարտիրոս
Սարյան
MARTIROС
САРЬЯН
MARTIROS
SARIAN



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՅ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСКУССТВ

ACADEMY OF SCIENCES OF THE ARMENIAN SSR
INSTITUTE OF ARTS



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՅ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

PUBLISHING HOUSE OF THE ACADEMY OF SCIENCES OF THE ARM. SSR

ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ

1975

В. А. МАТЕВОСЯН

МАРТИРОС САРЬЯН

W. H. MATEVOSIAN

MARTIRO'S SARIAN



Վ. Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Մարտիրոս Մարգարե

ՎԴ 13800



75Ap 2
U 15

Խ մ բ ա գ ի ր
ՀՈՎՀ. Մ. ԶԱՐԴԱՐՅԱՆ

U $\frac{0811}{703(02)-75}$ 50A-73 © ՀՍՍՀ ԳԱ Բանարակչություն. 1975 թ.

Ե Ր Կ Ո Ւ Խ Ո Ս Ք

Անցյալ դարի վերջի համաշխարհային գեղանկարչության մեծ վարպետները եկող սերնդին ավանդեցին քոյշքային զարգացման տեսդենցներով հիդ արվեստի բացարձակ արժեքներ: XX դարի առաջին տարիներին, զարգացման այդ հեռանկարով ներշնչված երիտասարդ նկարիչները եվրոպայի և Ռուսաստանի մշակութային կենտրոններում հանդես եկան նորարարական դեկլարացիաներով՝ ձևաբանական ու գաղափարական իրենց բմբոնումներին տալով փիլիսոփայական հիմնավորումներ: Եվ շուտով ակներև դարձալ, որ մի ճյր արվեստ ստեղծելու ընդհանուր նպատակով համերաշխ՝ բազմարիվ հարցերում նրանք կանգնած են տարբեր, հանախ հակադիր դիրքերում:

Անընդհատ խորանալով, այդ հակադրությունները շիկացրին մքնոլորտք այնքան, որ պատմականություններից օրինաշափության զատորոշումը արվեստի պատմաբանների նընշող մեծամասնությանը անիրազութելի թվաց: Իսկ պահպանողականները, ինչպէս միշտ, ուղղակի ժխտեցին ամեն մի նորություն քե՛ տեսության ասպարեզում, քե՛ ստեղծագործական պրակտիկայում:

Բայց Երևոյթների օբյեկտիվ ընթացքը ստիպում էր հաշվի հստել երիտասարդ արվեստագետների որոնումների ու արծարծած խնդիրների նետ: Եվ առաջադիմ ֆենադատների կատարած փորձերը ցույց ավեցին, որ նորարարի ոգեռուրյունն ունեցող նկարիչների ձգտումները բխում են ժամանակի գեղագիտական պահանջներից, բայց ճշանց հոծ բանակում Քշերն են ընդունակ կերտելու այնպիսի երկեր, ինչպիսիք ստեղծել էին իրենց ականավոր նախորդները: Ակնհայտ դարձավ նաև, որ այդ Քշերի թվում կան անհատներ, որոնք ո՛չ մանիթեստներ են հրապարակել, ո՛չ էլ բանավեն մղել:

Վերջիններից էր Մարտիրոս Սարյանը: Ուսանողական նստարանից նոր ելած, նա նույնպես բացասեց արդեն ակադեմիզմի վերածված «դասական» արվեստի կան ու տեխնիկան¹ և հատուկ դեկլարացիայով իրեն ուղղուցիներ շնոշակելով՝ սկսեց ստեղծագործել որպես իսկական նորարար:

Սարյանի, ինչպես և իր սերնդակիցներ Մատիսի, Շագալի, Պիկասոյի, Բրաքի ու այլոց գործերում անհայրներաց ցայտունուրյամբ բացահայտվեց ունիվերսալ այն օրենքը, թե արվեստը ունալուրյան իմիտացիան չէ: Բոլորի կտավներում էլ «ակներևուրյունից խզվելով» դարաշրջանին բնորոշ միտումը երևակվեց արտակարգ ուժգնուրյամբ: Դա անխուսափելի էր, որովհետև նորագույն արվեստի առջև ծառացած պրոբլեմների լուծումը պահանջում էր արստրահման ազատուրյուն ավելի, քան նույնիսկ այն շափով, որ առկա էր Սեղանի, Գոգինի ու Վան-Գոգի երկերում:

¹Տե՛ս M. Սարյան, Автобиографические сведения (выставка произведений), М., 1936, стр. 11.

Ինչպես իր սերնդի խոշոր վարպետներից յուրաքանչյուրը, Սարյանը հաճնարին հատուկ ինքնատիպուրյամբ վճռեց նախորդների առաջադրած հարցերը՝ յուրօվի նպաստելով մեր ժամանակի հոգենոր զարգացմանը։ Ամբողջ էությամբ տրվելով գույնի ավտոնոմ արժեքի և ծավալաձեկի կոնստրուկտիվերաշափական ֆունկցիայի լծորդման մտահայեցողական փորձին՝ նա միաժամանակ հարազատ մնաց բնությանը։ Ստեղծագործական մեծ սիրանքների տարիներին ազդարարեց, թե «բնությունը իմ առնեն է, իմ միակ սիրիանքը»², դրսեռելով յուրատեսակ կոսմոգոնական-պանթեիստական փիլիսոփայուրյուն։ Այս հավատամեռվ էլ կերպավորեց իր հույզերն ու մտքերը, որոնց երեսույթների խորում բաքնված համատիեզերական կենսաուժի գաղտնիքը, տվեց մարդու մի քանի հավերժական իդեալների և իդեաների նորովի մարմնավորումն ու մեկնությունը։

Սարյանի կյանքի տարբեր էտապներում, նրա արվեստի ոճաձևաբանական սկզբունքները և կոսմոգոնական-պանթեիստական դավանանքի դրսեռման հատկանշական կողմերը տարբեր են։ Որոշ առումներով տարբեր, հույնիսկ անհամատելելի են նաև նկարչի արծարծած իդեալների և իդեաների գեղագիտական հիմունքներն ու մասշտաբները։ Հարկավոր է որոշադրել ուրեմն, թե դրանք ինչ կերպ են ներկայացնում նրա անհատականությունը և ինչ հարաբերություն են կազմում ժամանակի համաշխարհային գեղարվեստական շարժման հետ։

Դա բավական դժվարացնում է առանց այն էլ բարդ ու բազմաշերտ սարյանական ստեղծագործության հետազոտու-

² «Առողջություն», 1913, № 9, стр. 12—13.

մը: Եվ ինքնին հասկանալի է, որ անկախ մենագրության
բնույթից ու ծավալից, անհնարին է մի աշխատությամբ
վեր հանել նրա արվեստի բոլոր ասպեկտները: Սույն ակնար-
կի հայատակն է համառոտակի ուրվագծել նկարչի էվոլյու-
ցիայի, պոետիկայի ու տեխնիկայի հիմնական պրոբլեմներից
մի քանիսը: Ընդսմին անհրաժեշտ ենք համարում հայտնել,
որ արծարծվող հարցերն ու սրանց մեկնությունները մեկ առ
մեկ քննարկել ենք Վարպետի հետ ու նոր միայն վերջնակա-
նապես ձևակերպել: Եվ Սարյանի այն մտքերը, որոնք շա-
կերտներով, բայց առանց տպագիր աղբյուր նշելու մեջբեր-
ված են տեխնում՝ անմիջապես գրառել-նշգրառել ենք այդ
քննարկումների ընթացքում:

Գ. Ռ Խ Խ Ա. Ռ Ա. Զ Խ Ն

Մոսկվայի գեղանկարչության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնարանը ավարտելուց հետո, 1904—1909 թվականների ընթացքում, Սարյանը շրջադարձ կատարեց գեղագիտական մի գավանանքից մյուսը՝ ստեղծելով այն նոր որակը, որը ժամանակի առաջադեմ մտավորականությունը ընդունեց ու կոչեց «սարյանական»։ Բայց սիսալ կլիններ ասել, թե վերջինիս ունվազուցիոն հայտնությունը ոչնչից ինչ կամ հանկարծահաս պատահականության արդյունք էր։

* * *

Սարյանի 1890—1903 թվականների երկերում տրված է օբյեկտների հավաք պատշաճի ուհալխտական, «քանդակաշին» կառուցվածքը։ Կոլորիտը ամիրում ատիկ, «թանգարանաշին» է։ Գերակշռող մոխրաշագանակագույնը կատարում է լույսի ու սավերի աստիճանավորումն իրացնող գեր։ Առարկաների սելինֆությունը երկարված է ոչ թե զունացին աարեր որակներով, այլ նույն տոնի մուգից գեպի բացը (կամ հակառակը) փոխանցումով՝ հասնելով, երբեմն, սպիտակի ու սևի դիմակայումների (Der Hell-Dunkel-Kontrast)։ Զեր

սահմանափակվում է իրականի արտաքին-ֆիզիկական հավաստիությունը վերարտադրելով:

Ճիշտ է, այս եղանակով մշակված նրա պատկերները բնության մանրակրկիտ պատճենահանումներ չեն: Սակայն օբյեկտիվ ռեալության «իմիտացիայի» մտածելակերպը դրանցում ակնբախ է:

Այդ XIX դարից եկող պողիտիվիստական մեթոդի արտահայտությունն էր: Նկարիչը շեշտում էր աշխարհի նյութականությունը, ընկալած իրը արտացոլում որպես «իսկական առարկա»¹, անտեսում մաքուր գույնի ակտիվ ֆունկցիան, — մի ելակետ, որը դեռ 1870-ական թվականներին ժխտել էին իմպրեսիոնիստները: Վերջիններս մեկնեցին օբյեկտների վրա ցոլացող լուսի անցողիկ էֆեկտներից և ձեզ դիտեցին իրեն փոխներթափանցված ծիածանային գույների վիբրացիա: Ֆիզիուրների առարկայական-ծավալային բնութագրման մասին այլևս խոսք լինել չեր կարող:

Բայց «անհրաժեշտ էր հաղթահարել գորշ ու պարտագրով վող դպրոցը և գտնել սեփական տեխնիկան»²: Եվ 1904—1909 թվականներին Սարյանը ստեղծեց «Հեքիաթներ ու երազներ» նկարաշարը՝ դիմեկտիկորեն բացասեղով թե՛ իր նախկին գործերի, թե՛ իմպրեսիոնիզմի ոճն ու մեթոդը:

Ճիշտ է, «Հեքիաթներում ու երազներում» ֆիզուրները հստակ ու ակներև են այնպես, ինչպես 1890—1903 թվականների գործերում: Բայց առկա է հիմունքային մի տարբերություն: Սարյանն այժմ այդ արդյունքին հասնում է ոչ թե օբ-

¹ K. Schoor, Stilkunde der Malerei vom Impressionismus zum Surrealismus, Vien—Linz—München, 1954, S. 6.

² «Առողջություն», 1913, № 9, ստ. 17.

յեկտների էմպիրիկ-առարկայական իմիտացիայով, այլ դրանց տարրալուծումով և ապա՝ հանդուգն աբստրահմամբ կազմավորված ձևերի նորութիւնի միասնացումով ու էքսպրեսիվ վերակերպավորումով:

Մյուս կողմից, «Հեքիաթներում ու երազներում» նկարիչը մերժում է ավանդական «թանգարանային» կոլորիտն այնպես, ինչպես իմպրեսիոնիստները։ Սակայն Սարյանի գործերին խորթ է նաև գունալուսային անցողիկ տպավորությունների ֆիբսացումը։ Ի տարբերություն իմպրեսիոնիստների, նա ստեղծագործում է գունընկալման առօրյա փորձի տվյալների անմիջական վերարտացողումը բացասելով, դրանց քըննական-մտահայեցողական վերադասակարգումով և ընտրովի գունակորդների տեսանկյունից ընդհանրացնելու մեթոդով։

Ահա այդ մեթոդով Սարյանը դրսեորեց իր կոսմոգոնական-պանթեիստական աշխարհայացքը՝ հոգեբանական-փիլիսոփայական առումով նույնպես բացասելով անցած դրաբանոցն ու իմպրեսիոնիզմը։ Նա պատկերվող բոլոր առարկաներն ու արարածները մեկնաբաննց որպես լուսաճառագման զորությամբ օժտված ողի-էակներ։ «Այդ նկարելականակը, — բացատրում է Վարպետը, — ինձ հնարավորություն ավեց կտավին դրոշմելու ոչ թե սովորական իրեր և մարդկային մարմիններ, որոնք անդրադարձնում են դրսից իրենց վրա ընկած լույսը (ինչը հատուկ է ուսալիստների երկերին—Վ. Մ.) կամ որոնք հենց լույսի թրթիռներից են կազմված (ինչը հատուկ է իմպրեսիոնիստների երկերին—Վ. Մ.), այլ ստեղծելու կերպարներ, որոնք հերեւ լույս են անցատում տիեզերական լուսատուի նման»։ Այստեղ գեղանկարչության պատմությանը ծանոթ ընթերցողը իսկույն կնկատի, որ Սարյանի «Հեքիաթներն»

ու երազները» ներկայացնում են արվեստի վանդոգյան սիմվոլիկ մտածողության հաջորդ էտապը:

Բայց երիտասարդ նկարչին ինչը հանգեցրեց «պարտադրվող դպրոցը» և իմպրեսիոնիզմը բացասելու մտքին:

Այս հարցը մեզ տանում է նրա կյանքի վաղ տարիները: «Որպես արվեստագետ ձեավորվելու պրոցեսում,—ասում է Վարպետը,—ինձ համար հսկայական դեր են կատարել մանկությանս հերիաթային օրերի տպավորությունները: Կարիկէ է ասել, որ իմ ստեղծագործական կյանքը սկսվում է դարմանքով ու հրճվանքով լեցուն այդ երջանիկ օրերից»: Ուրեմն աշխարհի մանկական պատկերացումը արթուն էր մնացել նրա հոգում՝ հետագա հասունանալով և աննկատելիորեն վերածվելով կոսմոգոնական-պանթեիստական մի փիլիսոփայության, բնությունը որպես տեսիլք վերարտահայտելու էսթետիկական դաշտանքի: Եվ քանի որ ուսման ընթացքում յուրացրած տեխնիկայով ու մեթոդով հնարավոր չէր մարմնավորել իր մտորած «զառ-վառ» աշխարհը, ուստի սկսեց հաղթահարել «պարտագրվող դպրոցը» և որոնել սեփական ոճը: Բայց ինչպես:

Նախ՝ դիմեց «կապանքներից ազատ բնությանը» (Սարյան): Դժգոհ իր «գորշ» պալիտրայից, էտյուդներ անելով թափառեց Կովկասում և հատկապես Հայաստանում: «Հարավի այս բազմադեմ ու գունագեղ վայրերում, մեր հնամենի երկրում ես վերագտա մանկությանս երազային աշխարհը»,— ասում է նա: Իր իսկ հավաստիացմամբ, «մեծ ուսուցչից»՝ բնությունից դասեր առնելուն զուգահեռ Սարյանը սկսեց ուսումնասիրել ու յուրացնել հայրենի ազգային մշակույթի յուրահատկությունները:

Այդ ձանապարհով էլ նա «Հայտնագործեց» մի նոր պալիտրա, որով հաղթահարեց մինչ այդ նկարած գործերի ախրոմատիզմը և կարող էր ի ցուցը բերել իմպրեսիոնիզմի բոլոր նվաճումները՝ գունալուսային նորբեր թրթիռներն ու հմայիշ ելեջները, տարվա տարբեր եղանակների, օրվա տարբեր պահերի անցողիկ տպավորությունների անմիջական արտացոլումը:

Բայց Սարյանը չգնաց իմպրեսիոնիստների հետքերով: Նրանց գունընկալումը բավական էմպիրիկ-զգայական, նրանց էսթետիկան բավական սենսուալիստական էր,—սկզբունքներ, որոնցով չէր կարող մարմնավորել իր կոսմոգոնական-սկանթեիստական գաղափարները, արստրահման և անկաշկանդ երևակայման միջոցով աշխարհը որպես զարմանահրաշ տեսիլք կերպավորելու ձգտումը: Ու երբ նա գրում էր, թե «Փրանսիացիների հետ ծանոթանալն էլ ավելի թեավորեց ինձ և համոզեց իմ ընտրած ճանապարհի ճշմարտացիության մեջ»³, հիմնականում նկատի ուներ պոստիմպրեսիոնիստներին: Եվ այն, որ վիրջիններս նպաստել են սարյանական ոճի ձեւավորմանը՝ ակներև է:

Այդպես ովեմն՝ բնության, հայկական մշակույթի, պոստիմպրեսիոնիստների արվեստի հետազոտմամբ ու յուրատիպ-սարյանական միասնացումով նկարիչը գտավ իր ոճը և ստեղծեց խորապես արդիտական «Հեքիաթներն ու երազները»:

Նկարաշարի այդ խորագիրը շպետք է հասկանալ տառացի-իլլուստրատիվ իմաստով: Սարյանի գործերը հեքիաթներ կամ երազներ են այնքանով, որքանով մարդը անհնարինը

³ M. Сарьян, Автобиографические сведения (выставка произведений), М., 1936, стр. 11.

դրանց մեջ վերածում կամ տեսնում է իբրև կոնկրետ-հայեցվող կերպար. այնքանով, որքանով Հեքիաթը ելք է տալիս սինթեզելու իմաստունի մտավոր փորձը և աշխարհի հանդեպ մանկան ցուցաբերած անարատ հայացքն ու հրճվանքը:

«Հեքիաթիներն ու երազները» բնության ինքնազրսեորման հավերժական պրոցեսի ինտուիտիվ ներդգայումն ու ուցիոնալիստական ըմբռնումը տեսողական ակտի վերածելու արդյունք են: «Բնության այդ հատկանիշը շոշափելի առարկա չէ, որ նայեի ու նկարեի,—ասում է Վարպետը,—ուրեմն ստիպված էի դիմել երևացող կյանքին, մեզ շրջապատող իրերին: Բայց սրանք կտավի վրա պետք է հանդես բերվեին այլ իմաստավորմամբ, քան իրենք իրենց կան (ասենք՝ սոսկ ծառ, կենդանի, մարդ, սար և այլն): Եվ այսպես, միակ ելքը ինձ համար հեքիաթային, երազային ֆանտաստիկան էր»:

Սարյանի նկարած գոյաձեւերը ինքնին ճանաշելի են: Բայց նրանց գունապլաստիկական արտահայտությունը, նրանց փոխարաբերությունն ու ստեղծած մինուրան այնքան խորհրդագույն են, որ ծայրաստիճան լարում են դիտողի երևակայությունը և միստիկական մի զորությամբ տանում զգացումի այն աշխարհը, ուր մարդս ինքնաբերաբար ներապրում է բնության զարմանալի ներդաշնակությունը:

Հակառակ նկարչի 1890—1903 թթ. գործերի, «Հեքիաթ-ներն ու երազները» ոչ թե առօրյա փորձի էմպիրիկ ցուցադրումը կամ ճանաշելի առարկաների պասիվ վերաբարդությունն են, այլ գոյանիշերի փոխարաբերմամբ ստեղծված տեսիլքներ: Սրանցում ներկայացված է մի երազ աշխարհ՝ քաղաքակիրթ և հավասարապես վայրենի, կուսական: Բնությունը սոսկ միշավայր կամ ֆոն չէ ֆիգուրների համար: Պատկերը դիտե-

լիս շես կարող ունենալ այն զգացումը, թե ահա մահկանացուները՝ անմահ բնության դրկում: Թե՛ կենդանիները, թըուշունները, մարդիկ, տները, թե՛ հողը, ծառերը ընկալվում են իրեւ հավերժության կնիքը կրող նույնորակ սիմվոլներ, որոնք անքակտելիորեն կապված են իրար կայուն հանդարտությամբ և, միաժամանակ, շարժուն ոիթմով:

Այդ նկարներում ամեն ինչ շնչավորված է: «ԶԵ՛ որ,—ասում է Սարյանը,—ամեն ինչ վերջ ի վերջո կենդանի է, ամեն ինչ պրոցեսի մեջ է: Անգամ քարը, ոչ թե հենց այնպես ընկած է տարածության մեջ, այլ ծավալվում է, կյանքն է ներկայացնում: Ամեն բան ներփին խլրումով է ապրում»: Բատայդմ էլ՝ Սարյանը «Հեքիաթներում ու երազներում» կյանքը դիտում է իրեւ մշտնջենական ինքնադրսնորում ապրող, բանականորեն ներդաշնակ ու շնչավորված համամիություն (All-Einheit):

«Հեքիաթներն ու երազները» կարելի է անվանել գունավոր տեսիլքներ: Ընդհանուր առմամբ՝ պալիտրայի ընդգրկումը հսկայական է,—դեղին, մանուշակագույն, կանաչ, վարդագույն, կապույտ, ծիրանի, կարմիր, ոսկեգույն, շագանակագույն, օխրա և այլն: Մրանք ներհյուտված են հնչեղության այլազան ելեկչներով ու կաթնամիսրագույն խառնուրդներով: Տեղ-տեղ զատորշշվում կամ ընդմիջվում են սև, թխակապույտ, թխակարմիր, թխաշագանակագույն բծերով ու շտրիխներով:

Իհարկե, այս պալիտրան նկարչի տարրեր գործերում երեվան է զալիս տարբեր փնջերով ու գամմաներով: Բայց որպես կայուն հատկանիշ՝ բոլոր դեպքերում էլ դրանք օժտված են ֆուֆորային թափանցիկությամբ, սաղափե տոների հարստու-

թյամբ և, միաժամանակ, ֆանտաստիկ գունալույս են հղում: Բոլոր գեղքերում էլ գույները մտածին են իրենց կազմած հարաբերությամբ և ընդհանուր տպավորությամբ: Դրանց փոփոխակները, մեկը մյուսի խորքից հրաշքով ցոլացող երանգները ստեղծում են գունալուսային այնպիսի թրթիռ ու հարմոնիա, այնքան իդեալական ու խորհրդավոր մի աշխարհ, որ մարդս կարող է ունենալ միայն երևակայության մեջ:

Դարձյալ իրեկ կայուն հատկանիշ՝ «Հեքիաթներում ու երազներում» գունաձևերը զրսեորդում են ազատ վարիացիաներով, ի հաշիվ գրապատմողական կատակցված սյուժեի: Դա կերպարվեստի՝ ինքն իր մեջ (առ *sich*) երևակելու այն տեսնենցն էր, որ բանաձևել էր Գոգենը. «Ընդհանրապես գեղանկարչության մեջ հարկավոր է փնտրել ներշնչումն և ոչ թե նկարագրությունն»: Սարյանի մոտիվները զերծ են նկարագրական տարրերից: Դրանք ծառերով, գաղելներով, սարերով, մարդկանց ու այլազան կենդանիների կերպարանքներով կազմակերպված ֆանտաստիկ իրազրություններ են, որ բացառում են ավանդական «գրական» սյուժեն: Դրանցում ֆիգուրները տեղաբաշխված են ըստ ընդհանուր-կոմպոզիցիոն հավասարակշռության ու էքսպրեսիայի՝ պատմողական գործողության միջնորդավորումներից ձերբազատված և ինքնակա:

* * *

Այդպիսով, Սարյանը շրջադարձ կատարեց «պարտադրվող դպրոցի» պողիտիվ ռեալիզմից ու մշակեց *XX* դարի ստեղծագործական ոգուն համահնչուն իր պոետիկան ու տեխնիկան: «Հեքիաթներում ու երազներում» միահյուսվում են մանկան միամտությունն ու իմաստունի խոհը: Ինչպես ժողովրդա-

կան բանահյուսության մեջ, նկարիչը իր մտահայեցողությունը կառուցում է բնության «հիմնական տարրերի» կոսմոգոնական-պանթեիստական լիդեալականացման վրա՝ ներկայացնելով մի հավերժական ներդաշնակություն: Ոչ թե դրանցից յուրաքանչյուրի արտաքնապես տեսանելի էմպիրիկ կոնկրետությունը, այլ բոլորին ի մի բերող, աշքով անշոշափելի հարաբերությունն է, որ հետաքրքրում է նկարչին: Իսկ այս հարաբերությունը Սարյանին պատկերանում է որպես բնության հարատե ինքնագոյացման, որպես «տիեզերքի ներքին շնչառության» արտահայտություն: Ենելով «բանականությունը բնությունն է, բնությունը՝ բանականությունը» իր հավատամքից, նա հանգում է մատերիալի, գգացումի և մտածողության նախասկզբնական միասնության գաղափարին: Հստայգում էլ՝ «Հեքիաթներով ու երազներով» դիտողին ներշնչում է կյանքի առօրյայից բարձրանալու և տիեզերքի անսահմանության մեջ հավերժանալու բերկրալից ձգտումը:

A 13800



Գ Լ Ո Ւ Խ Խ Ե Ր Կ Ր Ո Ւ Ր

1910 թվականից սկսվեց Սարյանի ստեղծագործական լյանքի երկրորդ շրջանը: Այսուհետև նա դրսեորեց արվեստի նոր ըմբռնումներ, որոնք արտահայտում են դարի համաշխարհային գեղանկարչության զարգացման մի շարք էական միտումները: Իհարկե դա չի նշանակում, թե նա հիմնիվեր հրաժարվեց նախորդ տարիների իր պոետիկայի և ձևակերտման բոլոր ելակետերից: Երբեմն նկարչի առաջադրած նոր սկզբունքների հիմքում շոշափվում են «Հնի» արմատները:

* * *

Տեսանք, որ մինչտասական թվականներին Սարյանը «ակներևությունից խզման» տենդենցին իրացրեց երազ-տեսիլք-ների և հեքիաթ-տեսիլքների մեջ: 1910-ականներից սկսած, սակայն, այդպիսի թեմաների այլևս շանդրադարձավ: Նկարչի հավաստիացմամբ, դրանք լիովին հնարավորություն էին տվել ազատագրվելու «պարտագրվող դպրոցի» գեղագիտական, ձևաբանական հիմունքներից և այժմ, արդեն, կարող էր առօրյա փորձից վերցված մոտիվներով իրականացնել ստեղծագործական իր ծրագիրը:

«Փյունիկյան արմավենին» նոր շրջանի բնորոշ երկերից է: Նյութը կոնկրետ-իրական է: Բայց դա անմիջական հայեցողության պայմաններում նկարելու արդյունք չէ: «1910-ականների գործերը, —ասում է Սարյանը, —արվեստանոցային հն: Ճիշտ է, որ դրանցից յուրաքանչյուրը որևէ կոնկրետ տեսարան է պարունակում, բայց միևնույն՝ չ' ամբողջ շարք տեսարանների, տպավորությունների և բազմաթիվ զննումների երեակայական միասնություն է ներկայացնում»:

«Փյունիկյան արմավենին» մոտիվի իմպրեսիստական-սենսուալիստական արտացոլում չէ, այլ հավաքական կերպար: Կտավը ընդգրկում է փողոցի մի փոքր հատված՝ տափակ կտուրներով տներ, արմավենու ծառ, երկու-երեք մարդու կենդանիներ: Այդուամենայնիվ, Եգիպտոսի համապարփակ «գիմանկարն» է: Երկրի հատկանշական գծերը միավորելով, նկարիչը կոնկրետ մոտիվը վերածել է մտահայեցական սիմվոլիկ պատկերի՝ պահպանելով, միաժամանակ, նրա յուրատիպ-եգիպտական որոշակիությունը:

«Փյունիկյան արմավենին» նկարչի կամքի աղատության բացահայտումն է՝ ելնել բնությունից, բայց աբստրահելու մարդկային ձգտումն ու կարողությունը հաստատել որպես հավաստի և մշտնչենական ձևմարտություն: Պատկերված ձեվերը համընդհանրական գոյանիշեր են: Նկարի կապուտ, կանաչ, գեղին, կարմիր, նարնջագույն, մանուշակագույն լուսաշող երանգները, իրենց նրբին փոփոխակներով, արդեն մտահայեցողական են: Ինքնարժեք գունաձևերի մի համակարգ է դա, ուր ամեն ինչ մտովի պոկվել է իր էմպիրիկ-նյութեղեն հիմքից՝ դառնալով հեղինակի անհատականությունը երեակող խորհրդանիշ:

Այդ է պատճառը, որ Եգիպտոսի հավաքական կերպարը լինելուց բացի «Փյունիկյան արմավենին» աշխարհը քննելու և կյանքի նկատմամբ հավատ ներշնչելու սարյանական իդեալի պոետականացումն է: «Արվեստի գործը,—հաճախ կրկնում է նկարիչը,—ինքը հենց երջանկության, այսինքն՝ ստեղծագործական աշխատանքի արդյունք է: Ուրեմն այն պետք է դիտողի մեջ բորբոքի ստեղծագործական կրակը, նպաստի ի բնուստ նրա ունեցած երջանկության, աղատության ձգտումները բացահայտելուն»:

Թանձր ու հնչեղ, հակադիր ու համադիր գույների, սինթետիկ գծերի, ձևերի ու հարթությունների այդ զմայլելի աշխարհը՝ «Փյունիկյան արմավենին», արտահայտում է կյանքի հավերժության խորհրդավոր ներզգայումը: Սարյանը հանձարի իր ենթագիտակցությամբ տեսանելիության արժեք է տվել այն անսահման ու առեղծվածային դրությանը, որ կոչվում է ժամանակ:

Այդպիս ուրեմն՝ 1910-ականների սարյանական արվեստում բացակայում են «Հեքիաթների» ու երազների» տեսլական մոտիվները: Սակայն զուտ երևակայության, թե իրական կյանքի փորձից ներբերված՝ երկու դեպքում էլ նյութը մեկնաբանվում է մտահայեցողական աշխարհ ստեղծելու ելակետով:

Բայց հենց նույն ելակետի ու այլ կարգի խնդիրների դըրսկորման մեջ տարբերությունները (որոշ կետերում՝ արմատական) ակներև են: Եվ այս տարբերությունների հիմքում ընկած է XX դարի համաշխարհային արվեստի առջև ծառացած մի շարք նոր ու էական պրոբլեմների սարյանական լուծումը: Գողենի, Վան-Գոգի, Սեզանի առաջադրած շափազանց

Այդ է պատճառը, որ Եղիստոսի հավաքական կերպարը լինելուց բացի «Փյունիկյան արմավենին» աշխարհը քննելու և կյանքի նկատմամբ հավատ ներշնչելու սարյանական իդեալի պոետականացումն է: «Արվեստի դործը, —հաճախ կրկնում է նկարիչը, —ինքը հենց երջանկության, այսինքն՝ ստեղծագործական աշխատանքի արդյունք է: Ուրեմն այն պետք է դիտողի մեջ բորբոքի ստեղծագործական կրակը, նպաստի ի բնուստ նրա ունեցած երջանկության, աղատության ձգտում՝ ները բացահայտելուն»:

Թանձր ու հնչեղ, հակադիր ու համադիր գույների, սինթետիկ գծերի, ձևերի ու հարթությունների այդ զմայլելի աշխարհ՝ «Փյունիկյան արմավենին», արտահայտում է կյանքի հավերժության խորհրդավոր ներզգայումը: Սարյանը հանձարի իր ենթագիտակցությամբ տեսանելիության արժեք է տվել այն անսահման ու առեղծվածային դորությանը, որ կոչվում է ժամանակ:

Այդպես ուրեմն՝ 1910-ականների սարյանական արվեստում բացակայում են «Հեքիաթների ու երազների» տեսլական մոտիվները: Սակայն զուտ երեակայության, թե իրական կյանքի փորձից ներբերված՝ երկու դեպքում էլ նյութը մեկնաբանվում է մտահայեցողական աշխարհ ստեղծելու ելակետով:

Բայց հենց նույն ելակետի ու այլ կարգի խնդիրների դըռսեկորման մեջ տարբերությունները (որոշ կետերում՝ արմատական) ակներեւ են: Եվ այս տարբերությունների հիմքում ընկած է XX դարի համաշխարհային արվեստի առջև ծառացած մի շարք նոր ու էական պրոբլեմների սարյանական լուծումը: Գոգենի, Վան-Գոգի, Սեզանի առաջադրած շափականց

բարդ, անվճուելի թվացող պրորլեմներն էին դրանք, որոնց տեսական ու գործնական արձարժմանը ձեռնամուխ եղավ Եվրոպայի ու Ռուսաստանի առաջադեմ երիտասարդությունը:

Իմպրեսիոնիստները գունալուսային անցողիկ ուժիքսների ու երեսութական թրթիոների մեջ գտան իրականության արտացոլման հիմքը: Հակառակ նրանց, Գոգենը, Վան-Գոգը, Սեղանը ներհայեցողական արստրակտ գունաձեռքի կոմպելիքս հարակցման կամ հակադրման մեջ որոնեցին կերպարի մարմնավորման արժեքը: Բայց իրենց միտումը իրագործելու համար նրանք չէին կարող գառնալ մոտիկ անցյալի (նախահիմարեսիոնիստական շրջանի) ավանդներին և այստեղ գտնել ոճածեաբանական անհրաժեշտ հիմունքները: Այդ միտումը սկզբունքորեն չէր կարող հարմարեցվել ո՛չ ակադեմիական ձևին, ո՛չ գիտական հեռանկարին, ո՛չ «թանգարանային» կուրրիտին, ո՛չ ճշգրիտ անատոմիային: Եվ նրանք ժխտեցին թե՛ իմպրեսիոնիզմի սենսուալիստական էսթետիկան ու տեխնիկան, թե՛ դասական «քանդակային» լուսաստվերը, տոնը և առարկայի իլյուզիոն արտացոլման փորձը: Ամեն մեկը յուրօվի՛ փնտրեցին այլ ավանդներ, սաեղծեցին գունավլաստիկական բոլորովին նոր սկզբունքներ,—հաճախ բացասելով միմյանց, արմատապես դիմակայելով իրար, կերպավորելով հակադարձ աշխարհներ: Ու բացահայտորեն նրանք էին, որ ուզի բացին XX դարի արվեստագետների առջև, խթան ծառայեցին ինչպես բազմազգի այլ նկարիչների, այնպես էլ Սարյանի ոճի սկզբնավորման համար:

Գոգենը իր մոտիվները կերպավորեց գեկորատիվ մոնումենտալ արվեստի հիմունքներով՝ հաստատելով կտավի մակերեսի երկտարածական բնույթը: Եղնելով քաղաքակրթու-

թյան վաղ շրջանների ստեղծագործական փորձից, նա կտավը կազմակերպեց համահարթ ու խոշոր, լոկալ ու սինթետիկ գունակտորներով։ Անտեսեց երրորդ շափը (խորությունը), գծային հեռանկարի դասական կանոնները՝ գունաձևերին հաղորդելով սիմվոլիկ նշանակություն։

Սեղանը Գոգենի երկերը համարեց «տափակ պատկերիկներ» և առաջ քաշեց կոնստրուկտիվ-արխիտեկտոնիկ կոմպոզիցիայի իր վերսիան։ Առջեի ու ետեի պլանների «հակադարձ» հարաբերմամբ, գույնի և լուսասավերի «մոդուլացիաներով» ստեղծեց ամրակուռ եռաչափ ծավալաձևեր (գունդ, կոն, բուրդ, գլան, խորանարդ և այլն)՝ երկրաշափորեն փոխկապակցված և իդեալականորեն սիստեմավորված։

Նույնքան ինքնատիպ է Վան-Գոգը։ Գոգենի հարթ ու խըստապարզ սիլուետների, Սեղանի հավերժաբար հաստատուն ծավալ-կոնստրուկցիաների փոխարեն նա ստեղծում է հրահեղուկ լավացի պես մշտաշարժ ձևեր, մաքուր ու հնչեղ երանգների կրքոտ փոխհարաբերություններ՝ այս ամենը ի մի բերելով «գրաֆիկորեն» շեշտված ու դինամիկ գունագծերի միջոցով։

Այս այն երեք գլխավոր ուղղությունները, որոնք արտահայտում էին XIX դարի արվեստի նվաճումները։ Եվ սրանց նկատմամբ ցույց տված վերաբերմունքով էլ պայմանավորվեց Սարյանի սերնդի, այսինքն՝ նոր դարաշրջանի գեղարվեստական մտածողության սկզբնավորումը։ Բայց այդ վերաբերմունքը միասնական չէր։ Ժառանգած տարրեր ուղղությունները անմերձենալի թվացին դարասկզբի ստեղծագործողներին։ Նրանք հիմնեցին սուանձին խմբավորումներ և արվեստի զարգացումը արան հակադիր ուղիներով։ Եվ բոլորն էլ կերակրությունը կազմում է առաջնային դեր։

արվեստի բարձրարժեք երկեր՝ յուրովի դիմորոշելով դարաշրջանի կուլտուրական առաջընթացը:

Չմերժելով մյուս երկուսից որոշ էլեմենտներ վերցնելու դաղափարը, ֆովիստները օրյեկտիվորեն հիմնական ելակետ ընդունեցին գողենյան ուղղությունը: Նրանք առաջարեցին «որբան հարթ, այնքան՝ արվեստ» բանաձեր: Եվ ըստ այդմ ստեղծեցին սկզբունքորեն երկտարածական, լրացուցիչներով հավասարակշռված, գունագեղ ու ներդաշնակ «արարեսկներ»:

Դարձյալ չմերժելով մյուսներից որոշ էլեմենտներ յուրացնելու դաղափարը, էքսպրեսիոնիստները հետեւեցին Վան-Գոոգին: Նրանք ծայրահեղության հասցրին «ուսուցչի» ոճաձևաբանական ըմբռնումները և ընտրած գեղանկարչական կոմպոնենտների դրսերման ու փոխհարաբերման մեջ հանդիս եկան իբրև դյուրագրդիո պսիխոանալիտիկներ: Նրանք պատկերը կազմակերպեցին էմոցիոնալ տենդագին բախումներով լիվրձնաշետերի լծորդումով, հնչեղ երանգների դիմարմոնիկ տոնայնացմամբ, ստեղ-ստեղի հայտ եկող ու փութով թաքնվող գունաբժերի և գունագծերի կոմբինացումով:

Կուբիստների դիրքորոշումը ավելի հեղափոխական էր: Առաջնորդվելով Սեղանի կոնստրուկտիվ-երկրաչափական մտահայեցողությամբ, նրանք խարիսկեցին «Փիզուրատիվ նկարչության» հիմքերը: Կուբիստները պատկերվող առարկան դիտեցին տարբեր կետերից, տարրալուծեցին այն և պսեփերկրաչափական ձևերի լծորդումով վերակազմեցին իբրև գուտ «նկարային օրյեկտ»: Այդպիսով քայլայլեց առարկայի անտառմիտական կառուցվածքը, կտավի վրա անհետացավ նրա ձանաշելի կերպարանքը և տեղի տվեց պլաստիկական-խրոմա-

տիկական աբսուրակտ արժեքների էսթետիկական ցուցաբերմանը:

Գոգինից, Սեղանից, Վան-Գոգից ՀՀ դարի ժառանգած ավանդների հանդեպ այլ վերաբերմունք ունեցավ Սարյանը: Նա հավասարապես երեքից էլ վերցրեց այն, ինչը անհրաժեշտ էր իր ստեղծագործական որոնումներին: Պահպանելով նկարչության «Փիգուրատիվ» բնույթը, նա գոյակցեց ու յուրովի միաձուկեց անմերձնալի թվացող գոգինյան գույնը, եռաշափ ծավալաձևի սեղանյան ըմբռնումը, վան-գոգյան գունագիծը: Եվ որ կարեւո՞ն է, այդ տարրերը համակերպելիս Սարյանը ելակետ ընտրեց հայ միջնադարյան որմնանկարչության, մանրանկարչության ու ճարտարապետության գեղագիտականուժածեաբանական հիմունքները: Այսպիսով նա կամրջեց ներկան անցյալին և շարունակեց հարյուրամյակներ ընդհատված ազգային արվեստի զարգացումը:

Գիծ-գույն երկմիասնությունը բնորոշ է Սարյանի 1910-ական թվականների բոլոր երկերին: Կտավի գունահատվածները լծորդվում-ոիթմավլորվում ու ներդաշնակորեն փոխկապակցվում են նաև միատարր գծի շնորհիվ: Սահուն անցումներով և անսպասելի կտրուկ շրջադարձերով՝ այն իր հերթին սահմանավորում-կազմավորում է գունաձեւերն ու սրանց ծավալային կոմբինացիան, բաժանում կամ միացնում լուսաստվերները, տարրեր պլաններն ու սրանց հաջորդականությունը: Եվ, փոխադարձաբար, ակներեւություն-ուժգնություն է ստանում իր հենց խրոմատիկական բացահայտումով՝ ու երանգային միջավայրի ազդեցությամբ:

«Գրաֆիկորեն» շեշտված գծի և ինքնակա գույնի համարժեք ցուցաբերման այս փորձով Վարպետը իրացնում է կոմ-

պողիցիայի ստրուկտուրալ-երկրաշափական իր սիստեմը: Նկարչական հակագիր տեսնդենցների միասնացումով նա ներքին դինամիզմ ու գերլարված պայքարի պաթոս է հաղորդում իր պատկերի վեհաշուր մոնումենտալությանը:

1910-ական թվականների իր երկերը Սարյանը դարձյալ սահեղում է ընտրովի գունակորդներով՝ հավասարակշռությունները աշխուժացնելու համար ներբերելով «խախտող» ինչ-որ երանգ: Նա հավասարապես կիրառում է գունահարաբերության չորս աստիճանների դինամիկ լծորդումները¹: Բայց յուրաքանչյուր կտավում հենք է դարձնում դրանցից որևէ մեկը (օրինակ՝ բարձրացող-ուժգնացող նարնջագույն-կապույտը) կամ երկուսը (օրինակ՝ բևեռային կարմիր-կապույտն ու կուլմինացիոն ծիրանի-կանաչը), օգտագործելով հնչեղության, հագեցածության բազմազան վարիացիաներով ու այլազան խառնուրդների հետ, իսկ մյուս զույգերին տալով օժանդակ ֆունկցիա: Նույնպիսի հաճախականությամբ ու որակով, Սարյանը կիրառում է նաև գունալծորդումներ, որոնք զուրս են հարաբերությունների այս համակարգից: Սակայն դրանք ևս դինամիկ են: Եվ ամեն դեպքում էլ նկարչի գործերում տեսնում ենք նախապես, մտովի ստեղծած գունակորդներ, որոնց լույսի տակ նա դիտել է բնությունը, մարմնավորել իր գաղափարներն ու իդեալները:

Գունահարաբերության դինամիկ լծորդումների ընտրությունը, ինքնին, ներքին կրակ ու հավերժաբար ճառագայթող չերմություն է հաղորդում Սարյանի պատկերներին: Եվ դժվար

¹ Այս շարքը սկսվում է դեղին-կապույտ զույգով և ավարտվում ծիրանի-կանաչով (մանրամասն տե՛ս E. Heimendahl, Licht und Farbe, Berlin, 1961).

չէ նկատել, որ այսպիսով նա վերաբռտահայտում-զարգաց-նում է իր ժողովրդի ստեղծած դիցաբանության, բանահյուսության, պոեզիայի ու մանրանկարչության բազում նմուշների հիմքում ընկած գունակերպավորման սկզբունքը:

Հիշենք, թե որքան հրաբորք է հեթանոս նախնիներից մեղ հասած «Վահագնի ծնունդը»: Աստծո ծննդյան երեսակայական-կոսմոգոնական պատկերացումն այստեղ գունատեսողական է: Սխալ չի լինի ասել, թե «Վահագնի ծնունդը» խոսքով արտահայտված «նկարային» տեսիլք է: Տիեզերական տարերքը ծավալվում է իրրև պարզորեն շեշտված զույների վիթխարի շարժում, որպես միասնական գամմա կազմող խրոմատիկական հրաշագործություն:

Մտաբերենք նարեկացու տաղերը և հայ մանրանկարիշների ծաղկած ձեռագրերից շատերը, որոնցում գույները հագեցած են, մարդարտաշող ու համահնչուն: Դրանցում հենց ինքը՝ գույնն է, որ լուսարձակում է:

Սարյանի «Փյունիկան արմավենին» ու 1910-ական թվականների մյուս երկերը այդ ստեղծագործությունների հետ համեմատելիս կունենանք նույն գերլարված գունահարաբերությունները, գույնի՝ իրրև հասկացություն-արժեքի ինքնակա ըմբռնումը: Եվ անկախ այն բանից, վերցված են բացարձակ մաքրությամբ, թե խառնուրդներով՝ երկու դեպքում էլ կունենանք ներքին այրումով ինքնաճառագայթող գունահարաբերություններ: Հարաբերություններ, որոնց ընկալումով դիտողը հետզհետե ներապրում է լույսի ձգտման առեղջևածայրին մի պրոցես՝ ինչն անընդհատ խորանալով, նրա երեվակայությունը տանում է դեպի տիեզերական անսահմանություն:

Սարյանը 1910-ականների իր գործնքը կազմակերպում է երկշափի-եռաշափի դինամիկ մի կոմպոզիցիայով՝ դարձյալ հաշտեցնելով երկու իրարամերժ տեսակետներ: Նա դիտողի հայացքը տանում է դեպի խորքը՝ չունենալով սակայն հեռվում անհետացող այն կետը, որը հատուկ է Ռենեսանսի և Հետուենեսանսյան նկարչությանը: Հեղինակը կանխում է զգայական տվյալի պատրանքը՝ նույնպիսի ուժգնությամբ ներկայացնելով ձեն ու գույնը թե՛ առաջին, թե՛ վերջին պլան-ներում:

Կառուցվածքի երկրաշափական հիմքը նույնպես գերծ է դասական հեռանկարային «օպտիկական» հատուկ ճշգրտությունից: Կտավը կազմակերպված է այնպես, որ օրգանապես լծորդվում են գծային երկտարածական ու եռտարածական ոիթմերը և կենտրոնաձիգ ու կենտրոնախույս շարժումները: Աբստրահման հանապարհով կարգավորված մի սիստեմ է ալիք, ուր հետուն սլացող գծերը խաչմերկվում են հետ մղող մի տեսողական հանգույցով՝ ապահովելով պատկերի ներամփուր երկտարածական բնույթը:

Այսպիսով, նկարիչը ստեղծում է երկշափի-եռաշափի կոմպոզիցիայի գերլարված հավասարակշռություն այնպես, ինչպես Սեղանը: Բայց եթե ֆրանսիացի վարպետը ձեւածավալի խնդիրները լուծելիս պահպանում էր իմպրեսիոնիստական գույնի մի քանի կողմերը, ապա Սարյանը նույն խնդիրները վճռեց Գոդենի և Հայկական մանրանկարչության ու որմնանկարչության սինթետիկ, դեկորատիվ-մոնումենտալ գունագորության սկզբունքները յուրովի դրսերելով: Այս ամենը ցույց էն տալիս, որ տարածության սարյանական ըմբռնուշը նույնքան աբստրակտ է, որքան դիմն ու գույնը: Եվ վերջին-

ներիս հետ զուգորդաբար՝ այն դիտողի հայացքը շեղում է էմպիրիկ փորձից, ուղղում աշխարհի ստրոկառուրալ մոդելավորման մտահայեցողական փորձը:

1910-ական թվականներին Սարյանը տեսանելի առարկաներից դուրս բերեց ընդհանրացված գունամակերեսներ, որոնք հաջորդաբար լծորդվում են իրար՝ կազմավորելով գոյանիշ ձևը: Սա մակաբերված է օբյեկտի ո՞չ զուտ արտաքին տեսքից, ո՞չ էլ սոսկ ներքին կառուցվածքից, այլ նրա և՛ արտաքին, և՛ ներքին կողմերի տարրալուծվածու աբստրակտ մի դիտակետի մեջ նորովի վերամիավորված արխիտեկտոնիկ սինթեզն է: Իզուր կլիներ այստեղ փնտրել իրականության իլյուզիան: Անտեսված են ֆիզուրների մանրամասները: Ամեն ինչ վերցված է երկրաշափական պարզությամբ:

Ճիշտ է, նկարի հարթության վրա տեղադրված ձեերը հարաբերվում են նաև տոների ներքին ելեկտումով: Բայց բոլոր գեպերում էլ Սարյանը ստեղծում է փակ գունաձեերի կոմպլեքսներ՝ ձգտելով դեկորատիվ-մոնումենտալ գունադրման մեթոդը և կոնստրուկտիվ-երկրաշափական մտածելակերպը դրսեորել հնարավոր բացարձակության սահմաններում: Ուրեմն սա այն ժամանակակից չէ, որ հատուկ է դասական արվեստին: Վերջինիս երանգային, ձեածավալային, լուսաստվերային «իլյուզիոն» բնականությանը հակառակ՝ Սարյանի երկերը տալիս են գունավոր, երկրաշափորեն տարանցատված ստվերների, սինթետիկ ձեերի ու շեշտված պլանների մի երկտարածական-եռտարածական կոնստրուկցիա, որ մտահայեցողական է:

Ինչպիս տեսնում ենք, այս ամենով Սարյանի 1910-ականների արվեստը խստագույնս տարբերվում է «Հեքիաթներից

ու երազներից»: Բայց գեղանկարչական մեթոդի այդ փոփոխությունը սոսկ ինքնաբավական որոնումների հետևանք չէ: Դա նկարչի աշխարհայցքում անընդհատ կատարվող խմորումների, կյանքը, արդեն ունեցած ու նոր մտուրած իդեաները այլ ասպեկտով դրսեորելու և իմաստավորելու արտահայտություն է:

1904—1909 թվականներին ստեղծած «Հեքիաթներ» ու երազներ» պատկերաշարում հպանցիկ գուներանգների ու կրովլ ծեփված վրձնահետերի, հոսանուտ կիսատոնների ու մշտաշարժ բծերի մթնոլորտում ձևերը աստիճանաբար կամ թոփքներով փոխակերպվում և դիտողի երեակայությունը տանում են դեպի հավերժություն: Արտասովոր ու ֆանտաստիկ է դրանցում ներկայացված աշխարհը և կարծես անսահման: «Բնության մեջ,—նկատում է Սարյանը, —ամեն ինչ ի սկզբանե շնչավորված է, ամեն ինչ կենդանի պրոցես է ապրում»: Եվ նա «Հեքիաթներում ու երազներում» մարմնավորել է իր այս հավատամքը: Պատկերված գոյածները զերծ են այն հատկանիշներից, որոնք սոսկ ողջախոհությամբ դատող անհատը համարում է իրական ու ճշմարիտ:

Այս գործերում բացակայում է աշխարհի՝ որպես անշունչ ու շնչավոր առարկաներից բաղկացած գոյացության մասին էմպիրիկ փորձով հաստատված պատկերացումը: Մարդը, հողն ու ջուրը, լեռներն ու սարերը, բուսական ու կենդանական աշխարհի ներկայացուցիչները ունեն այլ բնութագծեր և ապրում են սովորականից դուրս կյանքով: Յուրաքանչյուրը կերպավորված է իբրև իր տեսակի գաղափարագիր-սիմվոլը: Եվ շնչավորված է որպես բնության հավերժական լինելության գունապլաստիկական մարմնավորում: Անկշռային ու հավա-

սարապես աննյութական՝ բոլորն էլ տեսանելիորեն նշանաբանում են տիեզերքի ընդերքից մշտնչենաբար լիցքավորվող կյանք-պրոցեսը:

«Իմ կարծիքով,—ասում է Սարյանը,—արվեստագետը պետք է իր ողջ էությամբ զգա և արտացոլի բնության ներքին շնչառությունը: Նա պետք է զգա ամեն ինչի հիմքում գործող համատարած կենսառուժի գոյությունը: Դա, իշարկե, շրջապատում չի երևում: Մենք տեսնում ենք սովորական քար, ժառ, մարդ և այլն: Բայց այդ ուժը բնության ներքին, տիեզերական խլրտման մեջ է, որին կարելի է հասնել կոնկրետ առարկաների շոշափելիորեն իրեղեն տարբերությունները մի կողմ թողնելով և մտքով ու երեակայությամբ նրանց ներքին էությանը շփվելով»: Եվ «Հերիաթներն ու երազները» տալիս են այս մտքի ասղեցուցիչ թվացումը: Պատկերված առարկաները ցուցաբերում են իրենց գոյացման ու կերպարանավորման պրոցեսը: Ամեն ինչ ապրում է «տիեզերքի ներքին շընշառությամբ»:

Նկարի գունային ու տարածական կազմակերպմամբ, առարկաների կոմպոզիցիոն տեղադրմամբ ու լծորդումով Սարյանը հաղթահարում է արտաքնապես բնության մեջ տիրող քառորդ և ստեղծում ներքուատ կարգավորված մտապատճեր: Գոյաձերը արժեքավորված են այնքանով, որքանով հանդիսանում են ներկայացված աշխարհի հավիտենական շարժման ոիթմն ու տեմպը իրականացնող էլեմենտներ: Եվ այս աշխարհը ընկալելիս դիտողի մեջ հետզհետե ծավալվում է մի հոգեվիճակ, երբ նա զգայման ողջ ուժով ներապրում է բնության երեսութիւ տակ թաքնված համամիասնականությունն ու ներդաշնակությունը:

«Մարդը բնության ծնունդն ու նրա մի մասնիկն է», — զրում է Սարյանը: Եվ դիտողին մոգական ձգողությամբ ու աննկատելիորեն մասնակից է դարձնում «Հերիաթներում ու երազներում» կերպավորված կյանքին: Դիտողն ինքնաբերաբար ու հիմնովին համաձուլվում է այդ անսահման և տեսլական աշխարհին՝ իբրև բնության հավերժական ներդաշնակությամբ ու անմահության երջանիկ զգացումով համակված և ասիս անմարմին մի հյուկե: Այսպիս, ուրեմն, 1904—1909 թվականների իր երկերով Սարյանը դիտողի՝ որպես «աիեղերածին էակի» մեջ արթնացնում-ակտիվացնում է ենթագիտակցականը, բնազդի ձայնը, ուցիոնալ բնորոշման շնոթարկվող, ներթափուն հոգերոր զեղումներն ու ձգտումները:

Նույն այդ կոսմոգոնական մտահայեցողությունը 1910-ական թվականների սարյանական արվեստում դրսելորվում է մի այլ կերպ: Այժմ նրա կտավների մոտիվները ֆանտասիկ ու հերիաթային չեն: Վերցված են կոնկրետ իրականությունից: Այժմ Սարյանը նկարը կազմակերպում է լույսի ու սավերի, մաքուր գույշների ու կիսատոնների, համահարթ մակերեսների ու ձևածավալների կոնստրուկտիվ-երկրաշափական լծորդումով և կտրուկ սահմանավորում է ներկայացված աշխարհը: Սա բնության համամիասնական լինելության արստրահված սիստեմավորումն է՝ ներփակ, վերջավոր և իդեալական:

Բայց այդ ճանապարհով մտակառուցված պատկերը ստանում է մոնումենտալ գծեր և ներշնչում այնքան վիթխարի տեսողական մասշտաբներ, որ թվում է, թե նրա սովորական մոտիվը մողելավորում է ողջ տիեզերքը: Կտավի փոքր շափերի մեջ՝ ընտրովի գունակորդների, խստապարզ ձևերի ու սինթետիկ գծերի համակարգումով նկարիչը հասնում է ընդ-

Հանրացման բացառիկ խորության: Եվ անսահմանության պատրանք հարուցող «Հեքիաթներն ու երազները» Սարյանի 1910-ական թվականների գործերի համեմատությամբ ձեռք են բերում ինտիմ-կամերային հատկանիշներ ու թողնում անծայրածիր անապատից վերցված օաղիսների տպավորություն:

Գեղանկարչական մեթոդի և ոճի այդ փոփոխությունը, ուրեմն, ինքնաբավլ-տեխնիկական որոնումների հետեանք չեր: Դա իր կոսմոգոնական մտահայեցողությունը այլ տեսանկյունից դիտողին հաղորդելու և այլ կողմերով բացահայտելու նկարչի կամքի արտահայտությունն էր: «Մարդը,— գրում է Սարյանը,— պատահական երկույթ չէ այս աշխարհում: Ծնելով մարդուն, բնությունը իրագործում է իր գերագույն նպատակը, այսինքն՝ հանգում է իր բարձրագույն աստիճանին: Մարդու միջոցով տիեզերքը ճանաշում է իրեն ու արդարացնում իր գոյությունը: Մարդուն տրված է քննելու և դատելու ընդունակություն: Մարդը, ուրեմն, պետք է արդարացնի մայր բնության վստահությունը և նրա՝ շոայլորեն նվիրած բանականության միջոցով կատարի տիեզերքը ճանաշելու իր պարտականությունը: Խոկ արվեստն էլ պետք է մարդուն մղի տիեզերքի քննության ու ինքնազնահատման»:

Եվ ահա, 1910-ական թվականների սարյանական գործերը նայելիս դիտողը այլևս տարերայնորեն ու ինքնաբերաբար մասնակից չի դառնում պատկերված մոտիվի կյանքին, իրեն չի զգում նրա հյուզեմասնիկը: Այս անգամ ներշնչվում է այլ ուղղությամբ: Եվ հեղինակի կոնստրուկտիվ-երկրաչափական ուացիոնալիզմի կողմնորոշումով «հեռավորությունից» մտաքննում է աշխարհը, դատում բնության՝ դարձյալ իբրև հա-

մամիասնական ու ներդաշնակ ինքնադրսեռման պրոցես
ապրող գոյացության մասին։ Այսպիսով, իր ստեղծագործա-
կան էլուլուցհայի երկրորդ շրջանի արվեստով նկարիչը դի-
տողի մեջ արթնացնում-ակտիվացնում է դատողունակությու-
նը, մարդ-փիլիսոփան։ Եվ եթե մարդ-արարածի համար
հրձվալից է անմաշ՝ բնության կենդանի մասնիկը լինելու ինք-
նազագացողությունը, պակաս բերկրալից չէ նաև աբստրահելու
իր մեծ կարողության դիտակցումը։

* * *

Այդպիսով, 1910-ական թվականներին ամփոփվում է
Վարպետի էլուլուցհայի երկրորդ շրջանը։ Զարգացնելով նա-
խորդ տարիների իր արվեստի մի շարք սկզբունքները, նա
լուծեց նաև նոր ու կարևոր խնդիրներ։ Նկարիչը համաձայնեց
Դոգենի սինթետիկ գույնը, եռաշափ ծավալաձեկի սեղանյան
ըմբռնումը, Վան-Դոգի գունագիծը և ստացավ մի նոր՝ սար-
յանական արժեք ու որակ։ Անտարբերությամբ շանցնելով
եգիպտական արվեստի կողքով, Սարյանը այդ փորձը կատա-
րելիս հենվեց, չիմնականում, հայ ազգային մշակութի
ավանդների վրա։ Եվ դա նրան լիակատար հնարավորություն
տվեց վճռելու հնշեղ երանգների սուբորդինացիայի, «գրաֆի-
կական» գծի ու լոկալ հարթության, տարանջատված լուսի
ու ստվերի հարաբերման, տուրքակայի ու տարածության կոնս-
տրուկտիվ-երկրաշափական կառուցման, կոմպոզիցիայի բա-
ղադրամասների միջև դինամիկ ու ստատիկ հավասարակշռու-
թյուն ստեղծելու, Սրմելքի ու Եվրոպայի գեղարվեստական
մտածելակերպի լծորդման բարդ պրոբլեմները։ «Ինձ հա-
մար,—ասում է Սարյանը,—ստեղծագործական պրոցեսը են-

թագիտակցական տարերային շարժումների և մտքի լարված
աշխատանքի միասնական, անբաժանելի դրսեորում է»: Եվ
նշված պրոբլեմների սարյանական ըմբռնման ու գեղարվես-
տական կերպավորման մեջ արտացոլվում է փիլիսոփակող
մարդու մտքի աշալուրջ վերահսկողությունը երիտասարդա-
կան ձերբագատված զգացմունքների ու կրքերի անվերջ հոսքի
նկատմամբ: Ակամա հիշում ես Բրաքի խոսքը՝ «Սիրում եմ
օրենքը, որ ճշտում է հուզումը»: Եվ 1910-ական թվականների
սարյանական արվեստում տեսնում ենք իրականության հա-
րուցած հրճվանքով ու հոգեկան տարերային հուզումներով
ներծծված, բայց աբստրահման ճանապարհով գոյանիշերի
վերածված առարկաների ու երևույթների կազմակերպված մի
սիստեմ: Սիստեմ, որով նկարիչը նշանաբանում է բնության
ինքնադրսեորման ներքին «տրամաբանականությունը» և
տիեզերքի հիմքում ընկած համամիասնական կարգն ու ներ-
դաշնակությունը:

ԳԼՈՒԽ ԵՐԱՌՈՒԴԻ

1920-ական թվականներից ի վեր արմատապես կերպարանափոխվեցին Սարյանի պոետիկայի ու տեխնիկայի միքանի սկզբունքները: Իրականության հետ խիստ միջնորդավորված այն հարաբերությունը, որ բնորոշ էր նրա նախորդ շրջանների երկերին, այժմ դարձավ անհամեմատ ավելի անմիջական: Յանտառատիկան ու կյանքի իդեալական-երկրաշփական մոդելավորումը տեղի տվեցին շոշափելի-առարկայական և առօրյա-բնական պատկերացումներին:

* * *

1910-ական թվականների իր նատյուրմորտերում նկարիչը վերացել է ծաղիկների ու պտուղների արտաքին-բուսական հատկանիշների զգայման տվյալներից: Աբստրահմամբ վեր է հանել յուրաքանչյուրի հիմքում ընկած օրնամենտալ-իդեալական ձեզ՝ իր գունային ընդհանուր խարակտերով: Այսպիսով տվել է նրա տեսողական «սահմանումը», ստացել կոնկրետ տեսակի նախէլեմենտը կամ սիմվոլը:

«Քալակի ծաղիկներում» կապտամոխրավուն և մոխրավարդագույն ֆոնի ու կանաչ տերևների միջավայրում իրարեն հաջորդում հիմնականում շրջանակերպ գունաձևեր: Սրանց

դասավորության աղեղնակերպ ոփթմը հենվում է ուղղահայաց կապույտ սափորին: Կտավի կոլորիտը բևեռային և լրացուցիչ կոնտրաստաձևերից է կազմված: Կարմիր-կանաչ, մանուշակագույն-դեղին, կապույտ-նարնջագույն, սև-սպիտակ և այլ գույքերը մտահայեցողական են: Մաղկիները իրենց դրդապատճառների հեռավոր հիշեցումներն են միայն: Դրանք ունեն հենց ձեռակերտ արժեքներ:

«Քալակի ծաղիկներում» գույնը երկում է երկարածական հստակությամբ: Սոտարածականությունը դրսեորվում է ձեւվերի կոնստրուկտիվ բնույթով և դրանց տարանջատված մուգ ու բաց մասերի երկրաշափական փոխկապակցությամբ: Գույներն իրենք լուսարձակում են: Բացակայում է մթնոլորտի պարուղ շղարշը: Բայց վերջինիս նուրբ շոյանքին փոխարինում է բազմազան գունորակների միջև ստեղծված համահընչունության ներքին ելևէշը:

Այդ նատյուրմորտը վերահաստատումն ու յուրօրինակ կիրառումն է այն ավանդի, որը ամուր հիմքեր ունի հայ միջնադարյան մանրանկարչության, որմնանկարչության մեջ: Եթե դրա ընդգրկած նյութը համեմատենք ձեռագրերի խորան-ներում կամ անվանաթերթերում դրոշմված պտուղների և ծաղիկների հետ, կտեսնենք, որ առկա է գոյաձեւերի համանման սիմվոլացումը, գույնի և տարածության աբստրակտ մեկնաբանությունը:

Այլ բնույթ ունեն հետքսանական թվականների նատյուրմորտերը: Սրանք անմիջական հայեցողության տվյալների «ֆիբոնաչի» են: Հագեցած են բուսական, պտղային ձևերից ստացած հենց օրգանականի զգացողությամբ: Ամեն ինչ վերցրված է իր կոնկրետ-զգայական եղակիությամբ: Գույները

երևում են առօրյա փորձից հայտնի տոնային փոփոխականությամբ: Զընգուն կանաչը հետզ՞ետք ստանում է կապտավուն երանգներ, ապա ստվերուտ միջավայրում վերածվում թանձր կապտամանուշակագույնի: Նույնը՝ մյուս գույների հետ:

Այժմյան նատյուրմորտերում ժպտացող աստղերի նման վետվետում են դեղին, կարմիր, ծիրանի, սպիտակ, մանուշակագույն, վարդագույն ծաղիկները և պտուղները՝ լուսային տարբեր ելեկչներով ու ռեֆլեքսներով: Դրանք այլևս գոյանիշ-սիմվոլներ չեն, այլ հյութեղ պտուղներ ու ծաղիկներ՝ իրենց բուսական տեսքի առանձնակի հատկանիշներով: Դրանք ներկայացնում են այն, ինչը առողջ դատողությունը համարում է բնական:

Տեսանք, որ գույն-դիմք երկմիասնության տեսակետից նկարչի 1910-ական թվականների ստեղծագործությունը առնշվում է, մասնավորապես, հայկական որմնանկարչությանը և մանրանկարչությանը: Ինչպես մագաղաթի ծաղկվածքազմթիվ էշերում, այդ տարիների նրա երկերում գիծը «զրաֆիկորեն» շեշտված է և անջատում կամ միացնում է սինթետիկ տարածամասեր: Գունահարթության և գծի համագործակցությունը իրացնում է կոմպոզիցիայի կոնստրուկտիվ երկրաչափական սիստեմը:

Սակայն հետքսանական թվականների նրա գործերում չենք գտնում տարածամասերի և ձեւերի երկրաչափական մեկնությունը: Գծով սահմանազատված գունահարթություններին այստեղ փոխարինում են էտյուդային ազատությամբ քսված, թեթև կամ թանձրաշերտ վրձնահետերը, որոնք ստեղծում են մթնոլորտի ակնառու պատրանք և փոխներթափականցած

Հալլուն կիսերանգների քաղմազան ելևէջներ: Սա, ակընհայտորեն, արվեստի որմնանկարային և կոնստրուկտիվ-երկրաշափական սկզբունքի բացասումն է: Այս պարագայում գիծն էլ փոխում է բնույթը: «Գրաֆիկական» միտարր գունագծից այն վերածվում է «անկանոն» դունաբժի:

Դա, ի՞շարկե, դարձ չէ դեպի իմպրեսիոնիզմը, որովհետեւ Սարյանը չի տալիս բնույթյան անցողիկ տպավորությունը և գույնի ու լույսի սինթեզմամբ չի անէացնում հաստատուն ձևը:

Այնուհետև. տեսանք, որ 1910-ական թվականների իր երկերը Սարյանը ստեղծում էր մտահայեցողական, «ընտրովի» գունակորդներով: Այլ է նրա հետքսանական թվականների գործերի խրոմատիկական բնույթը: Այստեղ, արդեն, նա կտավի գունային համակարգը կազմակերպում է ըստ պատկերվող մոտիվի թելագրանքի: Ճիշտ է, նախորդ շրջանի գունահարաբերությունները չեն անհետացել, բայց դրանք «սըրբագրված» են նկարվող օբյեկտին համեմատ:

Բնականության այդ տենդենցը լիապես դրսեորվել է Սարյանի «Պտուղներ և բանջարեղեն» նատյուրմորտում: Այստեղ գույնը շեշտում-արտահայտում է ձևը: Երանգների հարուստ, հրճվալից բազմազանությունը վերաբատացողում է օբյեկտի հենց պտղային հատկանիշների՝ կենսական հյութեղության, ծավալի, մասսայի պողիտիվ զգացումը: 1910-ական թվականների գործերի երկրաշափական սիմվոլիզմը «Պտուղներ և բանջարեղեն» կտավում տեղի է տալիս նյութականության արտակարգ ձգտմանը: Այստեղ տրված են պտղի թե՛ իրական գունափոխումները, թե՛ գունալուսացին կոնկրետ միջավայրի ազդեցությամբ նրա վրա երևացող անդրադար-

ձումները, թե՛ լուսեղացումը, մթացումը և այլն: Բայց սա
նույնպես դարձ չէ դեպի XIX դարը:

Օբյեկտիվ ռեալության՝ որպես նյութեղեն կեցության ար-
տաշոլումը անցյալ դարի ռեալիստներն իրացնում էին ոչ թե
հնչեղ ու բազմազան գույներով, այլ «թանգարանային» կո-
լորիտով: Իսկ Սարյանի մոտ ձեր՝ որպես բնական տվյալի
արտացոլումը մարմնավորված է պլիներային գունանկարչու-
թյան միջոցով,—զանց առնելով, ինչպես նշել ենք, առարկան
գունալուսային սուբստանցի վերածելու իմպրեսիոնիստական
մտածելակերպը:

Սարյանը, այդպիսով «մրցում» է բնության հետ՝ ձգտելով
